ՏԵՂԵԿԱԳԻՐ Ա. Բ. Գ. Դ. 1912 [1])

(Вѣдомость А. Б. В. Г.)

Ե. Աստրախանի թեմ. [2])

1. Աստրախան քաղաքն *ունի 4 եկեղ. 1 եպիսկոպոս, 9 քահանայ։ Չկայ տեղեկութիւն ծխականների թուի և դպրոցների վիճակագրութեան։*

2. Սարատովի նահանգի Ցարիցին եւ Նիժեգորոդեան նահանգի տօնավաճառանոցում—1 *քահ. չկայ տեղեկութիւն ծխական, և դպրոցների։*

3. Ստավրոպոլի նահանգում (*Ստավրոպօլ, Սուրբ խաչ և Եդեսիա.*) 6 *եկեղ.* 7 *քահանայ,* 4871 *ար. ծխ. և* 4492 *իգ. ծխ. բոլորը* 9363 *ծխ. արականը իգականից աւելի է* 379-*ով*։ 3 *ծխական դպրոց.* 10 *ուսուցիչ-ուսուցչուհի և* 332 *սովորողներ (խառն)*։

4. Թերեքեան շրջանը (*Վլադիկավկազ, Ղզլար, Գրոզնի, Մոզդոկ, Գեօրգիևսկ, Պեատիգօրսկ և Կարաջալինի գիւղ.*) *ունի* 7 *եկեղ.* 8 *քահանայ,* 2863 *ար. և* 1540 *իգ. ծխ. բոլորը* 4403 *ծխ. արականը շատ է իգականից* 1323-*ով*։ *Չկայ տեղեկութիւն եկեղ. ծխակ. և դպր. մասին* Ղզլարի եւ Կարաջալինի։ *Կայ* 5 *ծխակ. դպրոց,* 20 *ուսուցիչ-ուսուցչուհի և* 360 (*խառն*) *սովորողներ*։

---

1) Տես «Արարատ» 1914 Թ. № 6։

2) Ընդհանրապէս այս Թեմի վիճակագրութիւնը շատ անփոյթ է կատարուել. շատ տեղերի ծխականների Թիւը չի բերուած, կամ չի յիշատակուած, Թէ այս ինչ քաղաքի եկեղեցին ի՞նչքան դրամագլուխ, մուտք եւ ելք ունի։ Շատ անգամ էլ եկեղեցու դրամագլխի հաշիւը կայ տեղեկագրում, սակայն չկայ մուտքի եւ ելքի հաշիւները այդ նոյն եկեղեցու եւ ընդհակառակը. Այդ է պատճառը, որ մենք լաւ համարեցինք այս Թեմի եկեղեցիների դրամագլխի, մուտքի եւ ելքի հաշիւները չդնել ընԹերցողի առաջ, իսկ ծխականների Թուերը բերինք, բայց այն բոլոր քաղաքների եւ գիւղերի ծխականների վիճակագրուԹիւնը, որ չի բերուած, մենք առանձին նշանակում ենք իրանց տեղում, ինչպէս որ կը տեսնի ընԹերցողը։

5. Կուբանեան շրջանը (Եկատերինադար, Բատալպաշինսկ, Եյսկ, Արմաւիր, Մայկոպ, Ռոստովսկ) ունի 7 եկեղ. 10 քահ. 5908 աբ. ծխ. և 5645 իգ. ծխ. բոլորը 11553 ծխ. արականը շատ է իգականից 263-ով։ Կայ 3 ծխ. դպրոց, 33 ուսուցիչ-ուսուցչուհի և 628 (խառն) սովորողներ։ Պակասում է Բատալպաշինսկ քաղաքի վիճակագրութիւնը։

6. Դաղստանի շրջանում (Թեմիր-խան-Շուրա և Պետրովսկ)—2 եկ. 2 քահ. 314 աբ. և 310 իգ. ծխ. բոլորը 624. արականը աւելի է իգականից 4-ով։ Կայ 2 ծխ. դպրոց, 3 ուսուցիչ-ուսուցչուհի, 34 (խառն) սովորող։

7. Անդրկասպեան շրջանում (Ասխաբադ, Դզլ-Արվատ, Մերվ, Կրասնովոդսկ)—3 եկեղ. 3 քահ. (Ասխաբատի և Կրասնովոդսկի ծխականների և դպրոցների մասին տեղեկութիւն չկայ)։ Դզլ-Արվատը ունի 198 աբ. և 155 իգ. ծխակ. բոլորը 353 ծխ. իսկ Մերվի երկու սեռի ծխականների թիւն է 500։ Այս երկու քաղաքները ունեն 2 ծխակ. դպրոց, 6 ուսուց.-ուսուցչուհի, 138 սովորողներ։

8. Թուրքեստանի շրջանում (Սամարղանդ, Տաշկենդ, Կոկանդ) —ունի 3 եկ. 3 քահ. 1219 աբ. և 1033 իգ. ծխ. բոլորը 2252 ծխ. արականը շատ է իգականից 186-ով։ (Չի բերուած Տաշկենդի ծխականների թիւը)։ Ունեն 3 ծխ. դպրոց, 11 սովորեցնող, 143 սովորող (երկու սեռից)։

9. Այլ եւ այլ տեղեր (Սև Ծովեան նահանգ, Կուբանեան շրջան, վերջինում հայերը ապրում են մեծ մասամբ գիւղերում (8), Տուապսէի շրջան եւայլն)—15 աղօթատուն, 7 քահ. 4604 աբ. և 4236 իգ. ծխ. բոլորը 8840 ծխ. արականը իգականից աւելի է 368-ով։ Այս տեղերում կայ 13 ծխ. դպրոց, 12 սովորեցնող և 392 սովորողներ։

Ամբողջ Ատրպատականի թեմում

Այսպէս ուրեմն. Ատրպատականի թեմում բոլոր այս տեղեկագրի կայ 41 եկ. և աղօթատուն 23 քահ. 1 եպիսկոպոս, 20227 աբ. ծխ. և 17661 իգ. ծխ. բոլորը 37888 ծխ. արականը շատ է իգականից 2566-ով։ Գիւղաքնակ ծխականների թիւն է՝ 6831 աբ. ծխ. և 6377 իգ. ծխ. բոլորը 13208 ծխ. արականը շատ է իգականից 534-ով։ (Արմաւիրն էլ գիւղ հաշուած). իսկ քաղաքաբնակ ծխակ. թիւն է 13396 աբ. և 11284 իգ. բոլորը 24680 ծխ. արականը շատ է իգականից 2112-ով։ Այս հաշուով

ցոյց է տալիս, որ Աստրախանի թեմը 1912 թուին ունեցել է 37888 ծխ. սակայն այս թիւը շատ է պակաս իրական թուից, որովհետև, ինչպէս տեսանք, շատ տեղերի ծխականների վիճակագրութիւնը չկայ տեղեկագրի մէջ: Դեռ 1900 թուի այս նոյն տեղեկագրի համաձայն Աստրախանի թեմը ունեցել է ընդամ. 39001 ծխական[1]. մեր թուից աւելի 1113-ով (39001—37888):

Հետևեալ տեղերի ծխականների թիւը չի բերուած տեղեկագրում՝ 1) Աստրախան, 2) Ցարիցին, 3) Նիժեգորոդեան տօնավաճառանոց, 4) Դզլար, 5) Ղարաջալին գիւղ, 6) Բատալպաշինսկ, 7) Ասխաբատ, 8) Կրասնավոդսկ, 9) Տաշքենդ: Այս հաշուով միջին թուով մի քահանային ընկնում է 881 ծխական, նոյնչափ ծխական ունի իւրաքանչիւր եկեղեցի: Թեմը ունի 31 հայ եկ. ծխ. դպրոց, որտեղ ուսուցանող ուսուցիչ-ուսուցչուհիների թիւն է 95 հոգի, իսկ սովորողների (աղջիկ և տղայ միասին) 2027: Այս թուերն էլ դարձեալ իրական չեն, որովհետև շատ տեղերի մասին տեղեկագրում տեղեկութիւն չկայ:

Զ. Նոր-Նախիջեւանի եւ Բեսսարաբիայի թեմ.[2]

1. Բեսսարաբիայի նահանգի 6 քաղաքում և մի աւանում— 7 եկեղ. 1 արքեպիսկ. 1 վարդապետ, 6 քահ. 681 ար. ծխ. և 770 իգ. ծխ. բոլորը 1351 ծխ. իգականը արականից աւելի է 89-ով: 7 եկեղեցին ունի դրամագլուխ 5030 ռ. 87 կ., մուտք անշարժ կալքերից 5673 ռ. 94 կ. ելք՝ 7891 ռ. 52 կոպ.:

2. Խերսոնի նահանգի 2 քաղաքում—3 եկեղ. 2 քահ. 687 ար. ծխ. և 768 իգ. ծխ. բոլորը 1455 ծխ. իգականը աւելի է արականից 81-ով: 2 եկեղեցու դրամագլուխն է 8090 ռ. մուտքը՝ 4221 ռ. ելքը՝ 5968 ռ. 34 կոպ.:

3. Պետերբուրգի նահանգի 1 քաղաքում—ոչ մի տեղեկութիւն չկայ:

4. Մոսկուայի նահանգի 1 քաղաքում—3 եկեղ. 2 քահ., 5200 ար. ծխ. և 4100 իգ. ծխ. բոլորը 9300 ծխական. արականը աւելի է իգականից 1100-ով: 3 եկեղեցին ունի դրամագլուխ 92636 ռ. 57 կոպ. մուտք անշարժ կալքերից 23294 ռ. 88 կոպ. և ելք 20906 ռ. 23 կոպ.:

---

1) Տես. «Արարատ» 1902 Թ. փետրուարի տետրակը էջ 147.

2) Ծխական գործերի վիճակագրութիւնը չկար տեղեկագրի մէջ, ինչպէս որ չկար տեղեկութիւն Երևանի և Թիֆլիսի թեմերի:

5. Դօնեան զօրաց շրջանի 4 քաղաքում և 7 գիւղում— 16 եկեղ. (2 աղօթատուն է). (միայն Նոր Նախիջևան քաղաքն ունի 7 եկեղ.), 1 վանք, 1 վարդ. 32 քահ., 15103 ար. ծխ. և 15239 իգ. ծխ. բոլորը 30342 ծխ. իգականը արականից շատ է 136-ով։ քաղաքաբնակ բնակիչների թիւն է 4820 ար. ծխ. և 4719 իգ. ծխ. բոլորը 9539 ծխ. արականը իգականից շատ է 101-ով, (չի բերուած Կամենսկ և Վարոնեժ քաղաքների բնակիչների թիւը)։ Գիւղաբնակ բնակչութեան թիւն է 10283 ար. ծխ. և 10520 իգ. ծխ. բոլորը 20803 ծխ. իգականը արականից շատ է 237-ով։ Ուրեմն բոլորը 30342 ծխ.։ 16 եկեղեցու դրամագլուխը է 38342 ռ. 3 կոպ. մուտքը՝ 80845 ռ. 33 կ. ելքը՝ 56575 ռ. 16 կոպ.։ Սեմը ունի 1 թեմական դպրոց 18 ուսուցչով և 264 աշակերտով։

6. Կիեւի նահանգի 1 քաղաքում—1 եկեղ. 1 քահ. 42 ար. ծխ. և 24 իգ. ծխ. բոլորը 66. արականը աւելի է իգականից 18-ով։ Եկեղեցու դրամագլխի մուտքի և ելքի հաշիւը չկայ։

7. Տաւրիկեան նահանգի 14 քաղաքում—17 եկեղ. (2 աղօթատուն է), 2 վանք, 1 վարդ. 9 քահ., 3235 ար. ծխ. ե 2428 իգ. ծխ. բոլորը 5662 ծխ. արականը աւելի է իգականից 808-ով։ 17 եկեղ. դրամագլուխը է 57829 ռ. 92 կոպ. մուտքը՝ 13519 ռ. 96 կոպ. ելքը՝ 14921 ռ. 32 կոպ.։

8. Եկատերինոսլավսկի նահանգի 3 քաղաքում—3 աղօթ. եկ. 2 քահ. 345 ար. ծխ. և 228 իգ. ծխ. բոլորը 573 ծխ. արականը աւելի է իգականից 117-ով։ 3 եկեղ. դրամագլուխն է 2384 ռ. 8 կոպ. մուտքը՝ 3024 ռ. 8 կոպ. ելքը 2180 ռ. 63 կ.։

Ամբողջ Ն. Նախիջ. և Բեսարբ. թեմում.

Այսպէս ուրեմն. ըստ այս տեղեկագրի թեմում կայ 50 եկեղ. որից 44-ը քաղաքային, իսկ 6 գիւղական, 54 քահ. 39-ը քաղաքային, իսկ 15-ը գիւղական, 1 արքեպիսկոպոս, 3 վանք, 3 վարդապետ։

Քաղաքաբնակ ծխականների թիւն է (բոլորը 32 քաղաք՝ չհաշուած Պետերբուրգը, որի մասին տեղեկագրում ոչինչ չկայ յիշուած) 15010 արակ. ծխ. և 13036 իգ. ծխ. բոլորը 28046 ծխական, արականը շատ է իգականից 1974. իսկ գիւղաբնակ ծխականների թիւն է (7 գիւղ բոլորը, այն է Դոնեան զօրաց նահանգում) 10283 արական ծխական և 10520 իգական ծխական. բոլորը 20803 ծխական, իգականը շատ է արականից 237-ով։ Թէ քաղաքաբնակ և թէ գիւղաբնակ ծխա-

կանների թիւն է արական 25293 ծխական և իգական՝ 23556 ծխական, բոլորը 48849 ծխական. արականը շատ է իգականից 1737-ով։ Քաղաքային մի եկեղեցուն (44) ընկնում է միջին թիւով (6) 637 ծխական, իսկ մի քահանան քաղաքային (39) ունի 719 ծխական։ Գիւղական մի եկեղեցուն (6) ընկնում է միջին թիւով 4467 ծխական, իսկ մի քահանան (15) միջին թիւով ունի 1387 ծխական։ Ընդհանրապէս մի եկեղեցուն (50) միջին թիւով ընկնում է 977 ծխական, իսկ մի քահանան (54) ունի միջին թիւով 906 ծխական։

50 եկեղ. դրամագլուխը 204314 ռ. 47 կոպ. անշարժ կայքերից ստացած եկամուտը 130579 ռ. 19 կոպ. ելքը 108443 ռ. 20 կոպ.։ Միջին թիւով մի եկեղեցուն (բոլորը 50 է) ընկնում է 4086 ռ. 29 կոպ. դրամագլուխ, 2611 ռ. 58 կոպ. մուտք անշարժ կայքերից և 2168 ռ. 86 կոպ. ելք։ 7 գիւղի 6 եկեղեցիները միասին ունեն դրամագլուխ 22200 ռ. 3 կոպ. անշարժ կայքերից ստացած եկամուտ 36692 ռ. 57 կոպ. ելք 37337 ռ. 54 կոպ.։ Միջին թիւով մի եկեղեցուն ընկնում է դրամագլուխ 3700 ռ. մուտք 6115 ռ. 42 կոպ. ելք 3206 ռ. 27 կոպ.։ 32 քաղաքի 44 եկեղեցիների դրամագլուխն է 182114 ռ. 44 կոպ. եկամուտը՝ 93886 ռ. 62 կոպ. ելքը՝ 71105 ռ. 66 կոպ.։ Միջին թիւով մի եկեղեցուն ընկնում է դրամագլուխ 4138 ռ. 96 կոպ. մուտք 2133 ռ. 79 կոպ. ելք 1616 ռ. 4 կոպ.։ Թեմում կայ մի թեմական դպրոց՝ 18 ուսուցչով և 264 աշակերտով։

Ստորև բերուած պատկերը ցոյց է տալիս, թէ ի՞նչքանն է թեմում ինչքան քաղ. եկեղ. կայ, ինչքանն գիւղական, քանի՞ ծխական քաղ. գիւղ. եայլն եայլն։

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

	Ա. Երեւանի թեմ.		Բ. Թիֆլիսի թեմ.		Գ. Շամախու թեմ.		Դ. Ղարաբաղի թեմ.		Ե. Աստրախ. թեմ.		Զ. Բեսարաբ. թեմ.		6 թեմում	
	Ռ.	Կ.	Ռ.	Կ.	Ռ.	Կ.	Ռ.	Կ.	Ռ.	Կ.	Ռ.	Կ.	Ռ.	Կ.
1. Քաղաքային եկեղ.	24	—	57	—	8	—	7	—	—	—	44	—	140	—
Գիւղական եկեղ.	633	—	382	—	32	—	215	—	—	—	6	—	1268	—
Երկուսը միասին.	657	—	439	—	40	—	222	—	41	—	50	—	1449	—
2. Քաղաքային քահ.	55	—	101	—	29	—	16	—	—	—	39	—	240	—
Գիւղական քահ.	666	—	239	—	18	—	172	—	—	—	15	—	1110	—
Երկուսը միասին.	721	—	340	—	47	—	188	—	43	—	54	—	1393	—
3. Քաղաքներ.	10	—	14	—	6	—	3	—	—	—	32	—	65	—
Գիւղեր.	615	—	299	—	45	—	224	—	—	—	7		1190	—
4. Քաղաքաբնակ ար. ծխ.	43341	—	91066	—	49772	—	12443	—	13396	—	15010	—	225028	—
Քաղաքաբնակ իգ. ծխ	38228	—	75809	—	43364	—	11662	—	11284	—	13036	—	193383	—
Երկուսը միասին (ար. և իգ.)	82569	—	166875	—	93136	—	24105	—	24680	—	28046	—	418411	—
5. Գիւղաբնակ ար. ծխ.	318603	—	148494	—	20957	—	105525	—	6831	—	10283	—	610693	—
Գիւղաբնակ իգ. ծխ.	284926	—	120199	—	18788	—	77138	—	6377	—	10520	—	517948	—
Երկուսը միասին.	603529	—	268693	—	39745	—	182663	—	13208	—	20803	—	1128641	13
6. Գիւղ. և քաղ. ար. ծխ.	361944	—	239560	—	70729	—	117968	—	20227	—	25293	—	835721	—
Գիւղ. և քաղ. ծխ. իգ.	323154	—	196008	—	62152	—	88800	—	17661	—	23556	—	711331	—
Բոլոր ծխական թիւր.	685098	—	435568	—	132881	—	206768	—	37888	—	48849		1547052	—
7. Քաղաքային եկ. դրամագլ.	*) —	—	82779	89	68462	24	16125	97	—	—	182114	44	349482	54

*) Երեւանի թեմի եկեղեցիների դրամագլխի հաշիւը տեղեկագրում չկայ։

Քաղաքային եկ. եկամուտը	36652	77	62722	81	30905	11	6344	—	—	—	93886	62	230511	31
Քաղաքային եկ. ելքը.	37693	26	62648	95	38793	68	5941	49	—	—	71105	66	216183	4
8. Գիւղական եկ. դրամագլ.	—	—	75696	84	17133	2	20626	14	—	—	22200	3	135656	3
Գիւղական եկ. եկամուտը.	34851	23	22599	9	1376	94	11167	19	—	—	36692	57	106686	95
Գիւղական եկ. ելքը	28804	86	19748	40	2779	77	12998	50	—	—	31337	54	101669	7
9. Թէ քաղ. և թէ գիւղ. եկ. դր.	—	—	158476	73	85595	26	36752	11	—	—	204314	47	485138	57
քաղ. և գիւղ. եկ. մուտքը	71504	—	85321	90	32282	5	17511	12	—	—	130579	19	337198	26
քաղ. և գիւղ. եկ. ելքը.	66498	12	82397	35	41573	45	18939	99	—	—	108443	20	317852	11
10. Վանքեր.	13	—	14	—	4	—	14	—	1	—	3	—	49	—
11. Վարդապետ.	20	—	5	—	—	—	2	—	—	—	4	—	31	—
12. Եպիսկ. կամ արքեպիսկ.	1	—	1	—	1	—	—	—	1	—	1	—	5	—
13. Թեմական դպրոց.	1	—	1	—	—	—	1	—	—	—	1	—	4	—
Ուսուցիչներ.	18	—	27	—	—	—	13	—	—	—	18	—	76	—
Աշակերտներ.	365	—	445	—	—	—	246	—	—	—	264	—	1320	—
14. Ծխական դպրոցներ.	—	—	—	—	14	—	52	—	31	—	—	—	97	—
Ուսուցիչ ու ուսուցչուհի.	—	—	—	—	61	—	88	—	95	—	—	—	244	—
Սովորող տղայ.	—	—	—	—	875	—	3007	—	—	—	—	—	3882	—
Սովորող աղջիկ.	—	—	—	—	604	—	1156	—	—	—	—	—	1760	—
Տղայ և աղջիկ.	—	—	—	—	1479	—	4163	—	2027	—	—	—	7669 *)	—

*) Ինչպէս տեսնում է ընթերցողը, 97 ծխ. դպրոց 7669 աշակերտներով Նախիջևանի, Ղարաբաղի եւ Աստրախանի թեմերում կայ, չկայ տեղեկութիւն մնացած 5 թեմերի ծխ. դպրոցների մասին։

Վերջացնելով սոյն տեղեկագիրը պէտք է ասենք, որ կարելի է ճիշտ համարել եկեղեցիների դրամագլխի և ելևմուտքի գումարները, որովհետև դրանք առանձին ուշադրութեան են ենթակայ կոնսիստորիաների, թեմական առաջնորդների կողմից և քաղուած են պաշտօնական հաշուեմատեաններից։ Հաշիւները պահող իւրաքանչիւր շրջանի գործակալը լաւ գիտէ, որ ինքը դրամական հաշիւները պէտք է անպայման մաքուր և լաւ պահի, հակառակ դէպքում կոնսիստորիայից պատասխանատուութեան կենթարկուի։ Նոյնպէս ճիշտ պէտք է համարել վանքերի, եկեղեցիների, կուսակրօնաւորների և քահանաների թուերը։

Սակայն առանձին կարևորութիւն ունի ծխականների թիւը, որովհետև մեր կարծիքով ծխականների թիւը, քահանաների ձեռքով կազմած, չի կարող համապատասխան լինել միանգամայն իրական թուին, որովհետև բոլորին էլ յայտնի է, որ գիւղական հայ քահանաների մեծագոյն մասը անձեռնհաս է մանրամասն, ճիշտ հաշիւ պահելու ծխականների։ Կան այնպիսի գիւղերի քահանաներ, որ տգէտ գիւղացուց ոչնչով չեն տարբերւում, իսկ այդպիսիները ի հարկէ չեն կարող մեր պահանջած միանգամայն համապատասխան իրականին թուեր պահել։ Վերջապէս պէտք է ի նկատի ունենալ, որ կոնսիստորիաներում է վերջնականապէս պատրաստւում այս տեղեկագիրը կոնսիստորիայի դրագիրներից մէկի ձեռքով, որ՝ ինչ խօսք, որ կազմելիս անտարբեր և մեքենայաբար է վերաբերւում գործին, ուստի և յաճախ կարող են սպրդել խոշոր սխալներ, մանաւանդ ծխականների թուերի նկատմամբ, որովհետև ամբողջ տեղեկագրի համարեա 3/4 մասը բռնում է ծխականների թուերի հաշիւները։ Շատ տեղերում էլ քահանաները ծխական ասելով հասկանում են միայն մեծերին, հասակն առած տղամարդկանց և կանանց, չհաշուելով ծխականների թուի մէջ նոր ծնուած երեխաներին, մանուկներին և ն։ Ենթադրում ենք, որ այդպիսի ձևով կազմած ծխականների թուեր այս տեղեկագրում տեղ բռնած կը լինեն, ինկատի ունենալով գիւղական քահանաներից (մեր խօսքը բոլորի մասին չէ) շատերի կատարեալ անհասկացողութիւնը։ Անճշտութիւնները ծխականների թուերի նկատմամբ չպիտի կարծել, որ գիւղական քահանաների կողմից է միայն լինում, այլ և քաղաքային։ օրինակ Երևանի թեմական առաջնորդի, կոնսիստորիայի քթի տակ եղած քաղաքի ծխականների թիւը միանգամայն անճիշտ է, այն է պակաս։ 1900 թուին Երևան քաղաքի ծխականների թիւը եղել է արական 4531 և իգական 4099, բոլորը 8630 [1]։

1) Տես Արարատ 1902 թ. յունուար տետր. էջ 55. Մխիթար վարդապետի (այժմ եպիսկոպոս) 1900 թուի նման տեղեկագիրը։

իսկ 1912 թուին, ուրեմն ուղիղ 12 տարի յետոյ, ար. 4500 և իգ. 4040, բոլորը 8540, դեռ 90 էլ պակաս. ուրեմն դուրս է գալիս, որ Երևանի հայ բնակչութեան թիւը քանի գնում պակասում է, ինչպէս մի ժամանակ Մալթուսի թէօրիայի ազդեցութեան տակ Ֆրանսիացիները. պարզ է, որ կամ 1900 թ. տեղեկութիւնն է սխալ և կամ թէ 1912 թուինը: Այսպիսի օրինակներ կարելի է դարձեալ բերել, սակայն սրանով միայն բաւականանանք և եզրակացնենք. անճշտութիւններ կան ոչ միայն գիւղական քահանաների կազմած վիճակագրութեան մէջ, այլ և քաղաքային քահանաների կազմածների մէջ:

1900 թուի տեղեկագիրը Մխիթար վարդապետը կազմել է և տպել «Արարատ»-ի 1902 թ. № 1 և 2-ում: Հետաքրքիր է մի համեմատութիւն անել, թէ այն ժամանակ, 12 տարի առաջ, հայոց թեմերում ինչքան ծխականներ կային:

1900 թ.	Արական	Իգական	Բոլորը	1912 [1]	Արական	Իգական	Բոլորը
1. Երևանի թ.	301764	272240	574004	1. Երևան.	361944	323154	685098
2. Թիֆլիսի թ.	160379	140147	300526	2. Թիֆլ.	239560	196008	435568
3. Շամախու թ.	22837	20206	43043	3. Շամախ	70729	62152	132881
4. Ղարաբաղի թ.	85982	71258	157240	4. Ղարաբ.	117968	88800	206768
5. Աստրախանի թ.	20397	18604	39001	5. Աստրախան.	20227	17661	37888
6. Բեսարաբ. թ.	9124	8536	17660	6. Բեսարաբ.	25293	23556	48849
6 թեմում	600483	530991	1131474	6 թեմում	835721	711331	1547052

Այս պատկերից երևում է, որ 1900 թ. ըստ միևնոյն տեղեկագրի 6 թեմում եղած ծխականների թիւն է 1131474 ծխ.

---

[1] *Մեր կազմած այս պատկերը ամբողջացնելու համար անհրաժեշտ ենք համարում դնել այն բոլոր քաղաքների եւ գիւղերի քանակը, որոնց ծխականների Թուի մասին տեղեկագրում չի եղել տեղեկութիւն. այսպէս 1)* **Երեւանի թեմ** *պակասում է 5 գիւղի ծխականների Թիւը. 2)* **Թիֆլիսի թեմ՝** *36 գիւղի եւ 4 քաղաքի (Սղնախ, Ղազախ, Քութայիս, Փոթի): 3)* **Աստրախանի թեմ՝** *1 գիւղի (Կարաչալին) եւ 7 քաղաքի. (Աստրախան. Ցարիցին, Ղզլար, Ասխաբատ. Տաշկենդ. Կրասնավօդսկ եւլն): 4)* **Բեսսարաբիայի թեմ՝** *5 քաղաքի (Պետերբուրգ, Վարոնեժ եւ Կամենսկ). Բոլորը՝ 40 գիւղի եւ 14 քաղաքի:*

իսկ 1912 թ.՝ 1547052, ուրեմն 12 տարուայ ընթացքում ծխականների թիւը աւելացել է 405578-ով. միջին թւով շատացել են մի տարուայ մէջ ծխականները 33798-ով։

Չափազանց զգալի կերպով աճել է Շամախու թեմի ծխականների թիւը. այսպէս 1900 թ. եղել է 43043 ծխ. իսկ 1912 թ. 132881 ծխ. ուրեմն այս թեմում 12 տարուայ ընթացքում ծխականների թիւը աւելացել է 89838-ով, և դա շնորհիւ Բագու քաղաքի։ Բագուն իր խոշոր արդիւնաբերութեամբ, հսկայական հարստութեամբ վերջին տասնամեակում դէպի իրան է քաշել և քաշում է հայ ժողովրդի համարեա բոլոր տարրերին. աղքատ գիւղացին գնում է բանւոր դառնալու, հարուստը փող դիզելու. թւերը աւելի ցայտուն են ցոյց տալիս այդ երևոյթը. այսպէս 1900 թ. Բագուն ունեցել է 3973 ար. և 3697 իգ. ծխ. բոլորը 7670 ծխ. իսկ 1912 թ. եղել է 46483 ար. ծխ և 39991 իգ. բոլորը 84474 ծխ. ուրեմն 12 տարուայ մէջ հայերի թիւը Բագւում շատացել է 76804-ով։

Նոյնպէս մեծ չափով շատացել է Բեսսարաբիայի ծխականների թիւը. մօտաւորապէս 31189-ով, չնայած որ մեր կազմածում պակասում են այնպիսի քաղաքների ծխականների թւերը, ինչպիսին են Պետերբուրգ, Վարօնեժ։ Մենք տեսանք, որ Աստրախանի թեմի վիճակագրութիւնը շատ վատ է կազմուած 1912 թ. ուստի և պատկերից երևում է, որ 1900 թ. Աստրախանի թեմը աւելի շատ ծխականներ ունի, քան 1912 թ. այսպէս 39001, և 37888, ուրեմն 1113-ով պակաս դեռ. սակայն Աստրախանի թեմի բնակչութեան 1912 թւի ընդհանուր գումարի վրայ պիտի աւելացնել 6 քաղաքների և 1 գիւղի բնակչութեան թիւը, որը մեզ անյայտ է, որովհետև, ինչպէս յիշել ենք, տեղեկագրում չի յիշատակուած այդ 6 քաղաքների և 1 գիւղի բնակչութեան թւերը։ Սակայն կարելի է մօտաւորապէս որոշել՝ հիմնուելով Մխիթար վարդ. կազմած 1900 թւի տեղեկագրի վրայ. այսպէս 1900 թ. Աստրախան քաղաքն ունեցել է 7893 [1]) ծխ. միւս տեղերում էլ մօտաւորապէս 10000 բնակիչ (Դղլար, Ցարիցին, Ասխաբատ, Կրասնավոդսկ. Տաշկենտ ևլն) բոլորը 17803 ծխ. եթէ ընդունենք, որ ծխականները 12 տարուայ ընթացքում կրկնապատկուել են, ուրեմն դուրս կը գայ, որ 1912 թ. Աստրախանի թեմում եղել է 67888 ծխական, (38888 + 30000)։

Թիֆլիսի թեմի ծխականների ընդհանուր գումարի վրայ պիտի աւելացնել 30 գիւղի և 4 քաղաքի ծխականների թիւը, որպէսզի ճիշտ գումարը դուրս գայ. միջին թւով եթէ ընդունենք որ իւրաքանչիւր գիւղ ունի 200 ծխական, այն ժամանակ 30 գիւղի բնակչութեան թիւը կլոր թւով 6000 կը լինի։ 1900 թ. տեղեկագրի համաձայն Սղնախը ունեցել է՝ 4314 ծխ.[2])

1) Տես «Արարատ» 1902 թ. էջ 145.

2) Տես նոյն գիրք էջ 60. 62.

Գաղախը՝ 450 ծխ. Քութայիսը՝ 1016 ծխ. Փոթին՝ 98 ծխ. քաղաքը 5878 ծխ. եթէ այս թիւը կրկնապատենք, այն ժամանակ ուրեմն Թիֆլիսի թեմի ծխականների թիւը կը լինի 435568+12000=447568 ծխ.։ Ըստ Մխիթար վարդ. տեղեկագրի Թիֆլիսի թեմը ունեցել է 300526. ուրեմն 12 տարուայ ընթացքում Թիֆլիսի թեմի ծխականների թիւը աւելացել է 147512-ով, որ մի հոկայական գումար է, ուրեմն մի տարում Թիֆլիսի թեմի ծխականների թիւը աւելացել է 12293-ով։ Միայն Թիֆլիս քաղաքը ունեցել է 1900 թ. 43330 ծխ. իսկ 1912 թ. եղել է 123387 ծխ. աւելացել է 80057-ով. այստեղ էլ նոյն երևոյթն է նկատուում, ինչ որ Բագու քաղաքում։

Այսպէս ուրեմն կլոր թուերով եթէ ցանկանանք որոշել՝ աւելացնելով նաև տեղեկագրում վիճակագրութիւն չեղած տեղերի ծխականների թուերն էլ, այն ժամանակ դուրս կը գայ, որ ամբողջ Ռուսաստանում՝ 6 թեմում գտնուող հայերի (հայ-լուսաւորչ.) թիւն է 1,600,000, որը շատ մօտաւոր թիւ է։ Մեր ձեռքի տակ կայ 1913 թ. Кавказс. Календ. ըստ որի 1911 թուի կառավարչական թուերը ցոյց են տալիս, որ հայերի թիւը (հայ-լուսաւորչ.) եղել է 1,525,265. տարբերութիւնը չնչին է։ Դժբախտաբար 1912 թուի կառավարչական թուերը մեր ձեռքում չկան։ Կարելի էր աւելի մանրամասն կերպով համեմատել 1912 թ. տեղեկագիրը 1900 թ. տեղեկագրի հետ, սակայն դա յոյս ունենք մէկ ուրիշ անգամ անելու։ Այժմ մի քանի խօսք կուզէինք ասել այսպիսի տեղեկագրի արժէքի մասին։

Չպիտի կարծել, թէ այս տեղեկագիրը կազմուում է միայն հերթին Գործոց Նախարարութեան ուղարկելու համար, ուրեմն և սխալ ուղիղ մինոյնն է. իւրաքանչիւր թեմի առաջնորդ-եպիսկոպոս ամենից առաջ այս տեղեկագրով պիտի ծանօթանայ իր թեմի գրութեան հետ, նոյնպէս և հայ ընթերցող հասարակութիւնը։ Մեզ համար շատ կարևոր է, թէ հայ ժողովուրդը ինչքան թիւ է կազմում, եկեղեցիների ինչքան ելևմուտ ու գրամագլուխ ունեն։ Բաւականանալ չենք կարող կառավարչական հաւաքուած թուերով, կարող է պատահել, որ այդպիսի տեղեկութեանց մէջ խոշոր սխալներ են լինում։ Այնպէս որ այս տեղեկագրի ուղիղ կազմելու համար շահագրգռուած պիտի լինի Սինոդը, իւրաքանչիւր թեմի առաջնորդ և ապա գործակալ քահանաները։ Հարկաւոր է իւրաքանչիւր տարի գիւղի թէ քաղաքի քահանան կանոնաւորապէս հաշիւ պահէ իր ծխականների թուի մասին և ապա գործակալ քահանային յայտնի իր ծխականների թիւը։ Այսպէս տեղեկագիրը լիքը կը լինի խոշոր սխալներով։

Երբ կոնսիստորիաները, գործակալները և քահանաները բարեխղճութեամբ կը կատարեն, դրանով արդէն նոքա իրանց պարտականութիւնը կատարած կը լինեն։ Ցանկալի էր, որ ուշք դարձուէր, գոնէ սրանից յետոյ, տեղեկագրի կանոնաւոր և ճիշտ կազմելու մասին։

Էջմիածին Մ. Միհասեան.